# Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցությամբ հանրային քննարկման արձանագրություն

**25/03/2016**

Քաղաք Երևան, մարտ 25, երկու հազար տասնվեց թվական

ՀՀ արդարադատության նախարարությունում 2016 թվականի մարտի 25-ին անցկացվեց հանրային քննարկում՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցությամբ:

## ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

| | |
|---|---|
| Արփինե Հովհաննիսյան | - ՀՀ արդարադատության նախարար |
| Սուրեն Քրմոյան | - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ |
| Ավետիք Իշխանյան | - «Հայաստանի հելսինկյան կոմիտե» իրավապաշտպան ՀԿ |
| Արման Դանիելյան | - «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ |
| Գրիշա Բալասանյան | - «Հետաքննող լրագրողներ» ՀԿ |
| Արթուր Սաքունց | - Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ |

## ՕՐԱԿԱՐԳ՝

1. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2006 թվականի հուլիսի 31-ի ՆՀ-163-Ն հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1304-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերի քննարկում:

## ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝

Ողջույնի խոսքով հանդես եկավ նիստը նախագահողը: Նա բաց քննարկման կոչ արեց և առաջարկեց քննարկել խնդրո առարկա նախագծերը:

Նիստի մասնակիցները միաձայն հաստատեցին օրակարգը:

1. ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանը **օրակարգի միակ հարցի** հետ կապված ներկայացրեց «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2006 թվականի հուլիսի 31-ի ՆՀ-163-Ն հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1304-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերը:

## ՆԱԽԱՏԵՍՎԵԼ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝

- հստակեցվել են պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի և անկախ հանձնաժողովի գործառույթները՝ բացառելով նույնաբնույթ գործառույթների իրականացումը,
- սահմանվել են հստակ չափանիշներ, որոնք պետք է դրվեն և՛ անկախ հանձնաժողովի, և ՛ դատարանի պատճառաբանված որոշումների հիմքում,
- դատապարտյալին տրվել են մի շարք իրավունքներ, որոնք ուղղված են իրեն վերաբերող որոշման կայացմանը ներկա գտնվելուն և իր պաշտպանությունն իրականացնելուն,
- նախատեսվել է անկախ հանձնաժողովների կողմից կայացված որոշումների դատական կարգով բողոքարկելու հնարավորություն:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանի ելույթից հետո ելույթ ունեցան նիստի մասնակիցները, որոնք ներկայացրեցին նախագծերին վերաբերող հարցեր և ստացան համապատասխան պարզաբանումներ:

## ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հավանություն տալ հանրային քննարկմանը մասնակցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների առաջարկին առ այն, որ հանրային քննարկման առարկա նախագծերի վերաբերյալ կարծիքները հնարավորինս սեղմ ժամկետում գրավոր եղանակով կներկայացվեն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

2. Սույն քննարկման հրապարակայնությունն ապահովելու համար նիստի վերաբերյալ պատրաստված արձանագրությունը նիստի մասնակիցների հետ համաձայնեցվելուց հետո տեղադրել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական կայքում:

Արձանագրությունը բաղկացած է 3 էջից:

**Նիստը նախագահող՝**

**ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**